

Վերներ Զայրթ,
Մարտին Բիչնաու
(Վիեննա, Ավստրիա)

ՀԱՅՈՑ ՀԱԿՈՔ Ա ԿԼԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1268-1286)
ՄՈՍԵ ԿՆԻՔԸ 1293 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՐՈԼՅԱՆ
ԻՆՎՈՒԼՔԵՆՑԻԱՆԵՐԻ ՎՐԱ

Նվիրվում է
Ավստրիայի Հայոց առաջնորդ
Գերաշնորհ Տեր Մեսրոպ
արքեպիսկոպոս Գրիգորյանի
ծննդյան 80-րդ տարեդարձին

Գ (Ժ) քաղկ, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

Թիրուլի մի շարք լատիներեն փաստաթղթեր կրում են Հայոց կաթողիկոսներից մեկի մոմե կնիքը, թեև նա այդ ինդուլգենցիաների տրման ժամանակ արդեն մահացել էր: Քանի որ հայ կաթողիկոսների կնիքների մասին քիչ բան է հայտնի, այս նմուշները առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում:

Կնիքի դիմերեսին գահին բազմած հոգևորական է պատկերված, ակնհայտորեն, ըստ լատինական ավանդույթի, կաթողիկոսն ինքը՝ աջ ձեռքը օրհնության համար բարձրացրած, իսկ ձախով պահում է գավազանը: Կաթողիկոսը կրում է եպիսկոպոսական հանդերձանք, գլխին սրածայր վեղար, ընդ որում նաև ոտքերն են նրբորեն պատկերված, որոնք հենված են փոքր աթոռակի վրա: Վերևում սկսվող շրջանաձև մակագրությունից այս պատկերն առանձնացված է մարգարտաշարով:

ՅԱԿՈՔ ԾԱՌԱՎ(Յ) Ա (ՍՏՈՒԾՈՅ) ԿԱԹՈՂԻԿՈՍ

Yakob cafa(y) A(stuco)y katholikos

Կնիքի դարձերեսի միջնամասում պատկերված է դեպի ձախ գնացող, բայց ետ շրջած գլխով, լուսապսակով Աստծո գառը՝ թիկունքում մի փոքր շեղ խաչով (կամ խաչադրոշմով), որը գտնվում է պատկերի կենտրոնում:

Մակագրությունն է՝

ԿԱՐՈՂ[ՈՒ]Թ(ԵԱՄ)ԲՆ Ա(ՍՏՈՒԾՈՅ) ԵՎ Յ(ԻՍՈՒՍ) Բ(ԻՍՏՈՍ)Ի
ՈՐԴՈՅՆ Ա(ՍՏՈՒԾՈՅ)

*Չողվածն ընդունվել է տպագրության 16.03.2012:

Գերմաներենով ամբողջ մակագրությունը.
Jakob, Diener Gottes, Katholikos.
Mit der Macht Gottes und Jesu Christi, des Sohnes Gottes

Երբ մոմն այս կնիքը Վատիկանի՝ Լևոն Բ-ի հայտնի Ոսկե կնիքի հետ ենք համեմատում, առաջին հայացքից աչքի են ընկնում ակնհայտ նմանություններ: Նույն բաժանումը կարելի է գտնել նաև այստեղ. մեջտեղում կա շրջանաձև պատկեր՝ մակագրությամբ շրջապատված: Գիմերեսին պատկերված է գահին բազմած թագավորը, դարձերեսին՝ այս դեպքում խաչով առյուծ: Երկու կողմում մակագրված է. Լևոն՝ թագավոր Հայոց, Լևոն՝ Քրիստոս Աստծով թագավոր Հայոց¹:

Լևոնի մետաղադրամների վրա, ընդհակառակը, կարելի է գտնել մոմն կնիքի դարձերեսի մակագրության սկիզբը, մասամբ նույնիսկ՝ ամբողջությամբ գրված.

ԿԱՐՈՂ[ՈՒ]Թ(ԵԱՄ)ԲՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ՝

Հակոբ Ա Կլայեցիին (Եփրատի ափին գտնվող Հոմնկլայից) 1268-1286 թթ. եղել է հայոց կաթողիկոս, որի նստավայրը Հոմնկլայում էր: Նա հայտնի է նաև Սսեցի, Տարսոնացի և Գիտնական մականուններով:

Գեռ որպես վարդապետ նա 1245 թ. եղել է բյուզանդական կայսր Հովհաննես Գ Գուկաս Բաթացես Լասկարիսի (1222-1245) մոտ բանակցությունների համար, որտեղ պաշտպանում էր հայկական դոգմաները: Նույն տարում նա ուղեկցում է հայոց թագավոր Հեթում Ա-ին մոնղոլական Մանգու խանի մոտ: Հետագայում էլ մասնակցում է արդեն Կոստանդնուպոլսում բյուզանդացիների հետ տեղի ունեցած բանակցություններին:

Հակոբ կաթողիկոսի օծումը տեղի է ունեցել 1268 թվականին: Այն բանից հետո, երբ 1270 թվականին Ակների վանքում Հեթում Ա-ն մահացավ որպես Մակար վանական, Հակոբը նրա որդուն՝ Լևոն Գ-ին, 1271 թ. հունիսի 1-ին Տարսոնում թագադրեց:

Անտիոքի մելքիտական պատրիարք Եվթիմիոս Ա-ն (1258-1277)³ 1272 թ. Կիլիկիայում էր և ուզում էր հայ կաթողիկոսին իր ենթակայության տակ առնել: Լևոն թագավորը պատրիարքին ձերբակալեց, սակայն նրան հաջողվեց փախչել: Գրիգոր Ժ պապը Հակոբին հրավիրել էր Լիոնի եկեղեցական ժողովին (1274), սակայն նա դրան չմասնակցեց:

Հակոբը կրթված էր և հետաքրքրվում էր գիտությամբ. նա նույնիսկ գրել է Մարիամի ծնունդին նվիրված շարական և, թագավորի օժանդակությամբ բազմացնելով, այն ուղարկել է հայկական գաղթաշխարհի համայնքներին՝ մինչև Իտալիա: Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» նա ուղարկում է բոլոր վիճակներին: Մեքարի վանքում հիմնում է նոր ճեմարան (սեմինարիա):

Հակոբը հավանաբար մահացել է 1286 թ.⁴ փետրվարի 12-ին և թաղվել Հոմնկլայում⁵:

¹ Հմմտ. A. Martini, I sigilli d'oro dell' Archivio Segreto Vaticano. Mailand 1984, 48f. und 204f., Sigilli 8A-D; Farbtafel 8D.

² Հմմտ P. Z. Bedoukian, Coinage of Cilician Armenia (Numismatic Notes and Monographs 147). New York 1962, 411.

³ Հմմտ. PLP 6267.

⁴ Առկա են, սակայն, նաև թվականներ, ինչպես, օրինակ՝ 19. 11. 1285 կամ 1287:

⁵ Մի փոքրիկ ժամանակագրության համաձայն, այնուամենայնիվ, նա թաղվել է Դրազարկում: Վ. Ա. Դակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., Եր., Ա, 1951, էջ 48:

1286 թվականի ապրիլի 4-ին Հակոբին հաջորդում է Կոնստանտին Բ Կատուկեցին: Իր հակալատինական դիրքորոշման պատճառով 1289 թ. Հեթում Բ (1289-1293) թագավորը նրան գահընկեց է անում:

1290 թվականին թագավորը Կոնստանտինի իրավահաջորդ է նշանակում Հռոմկլայից մի սովորական ճգնավորի՝ Ստեփանոս Դ-ին, որն աջակցում էր նրա լատինամետ քաղաքականությանը: Նրա օրոք Հռոմկլան 1149-ից սկսած դառնում է կաթողիկոսների նստավայր:

1292 թվականին մամուլքները նոր սուլթան Աշրաֆի գլխավորությամբ գրավում և ավերում են այն, իրեն՝ Ստեփանոսին, որպես գերի Դամասկոս տանելով, որտեղ նա 1292 թվականին իր մահկանացուն է կնքում:

Դրանից հետո 1293 թ. կաթողիկոս է դառնում լատինամետ Գրիգոր Անավարզեցին (մինչև 1307 թ.): Նա իր աթոռանիստը տեղափոխում է մայրաքաղաք Սիս և կատարում վերափոխություններ լատինական եկեղեցու շնչով, ինչի շնորհիվ ակնկալվում էր եռանդուն աջակցություն ստանալ պապից: Սսի եկեղեցական ժողովի ժամանակ՝ 1307-ին, այս քաղաքականությունը, որին աջակցություն էին ցուցաբերում նաև Լևոն Գ (1301-1307) թագավորը, նաև նրա հորեղբայր Հեթումը, հաստատվեց: Սակայն ընդդիմությունը բողոքում է մոնղոլներին, ինչը կաթողիկոսի և թագավորի համար ճակատագրական է դառնում:

Համեմատաբար փոքր հայկական թագավորությունը Կիլիկիայում իր՝ հայ, ասորի, հույն, լատին և այլ հետերոգեն բնակչությամբ, ստիպված էր ապավինել իր դաշնակիցներին՝ հզոր հակառակորդներից պաշտպանվելու համար: Խաչակրաց արշավանքների միջոցով լատինական Եվրոպան բազմիցս էր ապացուցել իր բարձր ռազմական հմտությունները թե՛ ջրում, թե՛ ցամաքում, սակայն XIII դարի վերջին Պաղեստինում խաչակրաց պետությունների վիճակը արագորեն վատթարանում էր: 1291թ. Ակկոյի հետ ընկնում է վերջին հենակետը, նաև Գերմանական միաբանության Մեծ մագիստրոսն է իր նստավայրը Ակկոյից Վենետիկ տեղափոխում: Կիլիկիայի քրիստոնյաները, այնուամենայնիվ, մեծ հույսեր էին կապում Արևմուտքի օգնության և օժանդակության հետ:

Երբեմնի հզոր Բյուզանդական կայսրությունը 1204 թվականին «խաչակրաց չորրորդ արշավանքով» ահավոր հարված ստացավ: Թեև Միքայել Ը Պալեոլոգին հաջողվեց կրկին հետ վերցնել հին մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, բայց նրա քաղաքականությունը պետությունից ավելին էր պահանջում, ինչը իր որդու՝ Անդրոնիկոս Բ-ի (1282-1328) օրոք վերջինիս հանգեցնում է տնտեսական, ռազմական և քաղաքական անկման: Միքայել Ը-ն համաձայնել էր Հռոմի հետ եկեղեցական միության մեջ մտնել՝ Արևմուտքից օժանդակություն ստանալու համար, բայց այստեղ նրան հիասթափություն էր սպասվում, ինչի պատճառով Անդրոնիկոսը հրաժարվում է այս քաղաքականությունից: 1294 թ. նա ներքաշվում է ծովային պետություններ Ջենովայի և Վենետիկի միջև ընթացող պատերազմի մեջ, ինչը մեծ վնաս է հասցնում կայսրությանը: Չնայած այս ամենին՝ Փոքր Հայաստանը⁶ ձգտում էր պահպանել բարիդրացիական հարաբերություններ Բյուզանդիայի հետ: Հենց այս լույսով պետք է դիտարկել 1296 թ. Միքայել Թ-ի ամուսնությունը հայ արքայադուստր, Հեթումի քույր Ռիտայի հետ, որին հետո կո-

6 Արևմտաեվրոպական հեղինակները, Փոքր Հայաստան ասելով, հասկանում էին Կիլիկիայի Հայկական պետությունը: Հողվածի մեջ փոփոխություններ չնուցնելու նպատակով թողել ենք բնագրային անվանումը: Խմբ.:

չեցին Մարիա Պալեոլոգինա⁷:

XIII դարի կեսին մոնղոլական արշավանքն ամբողջ Առաջավոր Ասիան ցնցել էր, թյուրքական ցեղերը ներխուժում էին Փոքր Ասիա, որն արդեն 1300-ին գրեթե ամբողջությամբ թյուրքերի տիրապետության տակ էր:

XIII դարի երկրորդ կեսին ծնկի եկավ նաև XII դարում և XIII դարի սկզբում հզորացած քրիստոնյա Վրաստանը: Հատկապես Արևելքն էր մոնղոլներից կախված, առանձին շրջաններ տառապում էին ներմոնղոլական թշնամությունից՝ Ոսկե Հորդայի և Իլխանների միջև: Միայն 14-րդ դարի սկզբին պետք է հարաբերական անդորրի մի շրջան հաջորդեր:

Քրիստոնյա Արևելքի և Կիլիկիայի համար հատկապես վտանգավոր էին մամլուքները՝ թյուրք-կովկասյան ծագումով, իսլամացած պատերազմական սարուկները: Նրանց գեներալները 1250 թ. իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը և Կահիրեից իշխում են Եգիպտոսի և Ասորիքի վրա: 1260 թ. նրանք Պաղեստինում հաղթում են մոնղոլներին և այնուհետև վտարում են խաչակիրների՝ Ասորիքից և Պաղեստինից: Բեյբարս Ա (1260-1277) և Քալաուն (1279-1290) սուլթանները չափազանց ագրեսիվ քաղաքականություն էին վարում, որից ծանր զրկանքներ է կրում նաև Կիլիկիան, ինչի վառ ապացույցն էր նաև 1292-ին Հռոմկլայի գրավումը և ավերումը: Փոքր Հայաստանի մայրաքաղաք Միսր նրանք գրավում են առաջին անգամ 1266-ին, երկրորդ անգամ՝ 1275-ին: Հաջորդ տարի Լևոն թագավորին հաջողվում է Միսի մոտ մամլուքների բանակի նկատմամբ հաղթանակ տանել:

Այն ժամանակ դեռ կրոնի հանդեպ հանդուրժող վերաբերմունք ունեցող մոնղոլները⁸, որոնց հետ Փոքր Հայաստանը նախկինում լավ հարաբերություններ էր պահպանում, այլևս բավարար ուժեղ հենարան չէին մամլուքների դեմ, թեև մինչև 80-ական թվականները համատեղ գործողություններ էին ձեռնարկում ընդհանուր հակառակորդի դեմ:

Լևոն Բ-ի († 1289) կառավարման վերջին տարիներին Փոքր Հայաստանի դրությունը ակնհայտորեն վատթարանում է: 1285-ին թագավորը ստիպված էր անբարենպաստ պայմաններով խաղաղություն կնքել մամլուքների սուլթան Քալաունի հետ, որը նաև բարձր տարեկան հարկ էր նախատեսում: 1292-ից սկսած, սակայն, նոր սուլթան Աշրաֆը կրկին արշավում է հայերի դեմ՝ գրավելով Հռոմկլան: Դրան հաջորդում են նաև հայերի համար ներքաղաքական ծանր ժամանակներ: Հեթում Բ թագավորը, 1292-ին հաջորդելով հորը՝ Լևոն Բ-ին, 1293 թվականին հեռանում է Դրագարկ վանք, որից հետո նրա եղբայր Թորոս Ա-ն է թագավոր դառնում: Նա, սակայն, 1294-ին նույնպես հեռանում է վանք, որից հետո Հեթում Բ-ն կրկին իշխանության գլուխ է անցնում: Երբ, սակայն, նա 1296-ին Թորոսի հետ միասին Ռիտայի հարսանիքի կապակցությամբ Կոստանդնուպոլիս է մեկնում՝ բյուզանդացիների հետ կնքած նոր դաշինքը ամրացնելու նպատակով, նրանց եղբայր Սմբատը իրեն թագավոր է հռչակում՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո, ձերբակալելով իր եղբայրներին: 1298 թվականին Սմբատի դեմ դուրս գալով՝ մյուս եղբայր Կոստանդին Գ-ն ազատում է Հեթումին, ապա կառավարում մինչև 1299 թվականը, երբ Հեթում Բ-ն ետ է վերցնում իշխանությունը՝ իր

7 Նրա բյուզանդական կնիքների առնչությամբ հմմտ. W. Seibt, Die byzantinischen Bleisiegel in Österreich. I. Teil: Kaiserhof (Veröffentlichungen der Kommission für Byzantinistik II/1). Wien, 1978, Nr. 32.

8 Իսլամամետ միտումներն առաջին անգամ ի հայտ եկան 1282-1284 թթ.: Իսլամամետ կազաների (Ġāzān) տիրապետության սկզբնավորմամբ ավարտվեց քրիստոնյաների համար նպաստավոր իրադրությունը:

եղբայրներ Սմբատին և Կոստանդինին Կոստանդնուպոլիս վտարելով: 1301 թվականին Հեթումը իշխանությունը հանձնում է իր զարմիկ Լևոն Գ-ին, որը գահակալում է մինչև 1307 թվականը: Պարբերաբար տեղի էին ունենում մամուլքների հարձակումներ, որոնց նկատմամբ մոնղոլները հայկական և վրացական գորքերի օգնությամբ 1299-ին հաղթանակ տարան Հոմսի մոտ, բայց դա էլ դրույթունը էականորեն չի փոխում⁹: Այս պայմաններում Կիլիկիայի թագավորները մեծ հույսեր էին կապում Արևմուտքի, այսինքն՝ լատինների օգնության հետ: Կաթոլիկ եկեղեցին, որն այդ ժամանակ արևելքում քարոզչությամբ էր զբաղվում, ձգտում էր նաև հայ առաքելական եկեղեցին լիովին իրեն ենթարկել, ինչը, սակայն, չնայած որոշ բանակցություններին, քիչ թե շատ ձախողվում է, թեև թագավորները իսկական միությամբ շահագրգռված էին, որպեսզի հնարավորինս մեծ աջակցություն ստանան պապից և քրիստոնյա արևմուտքի տիրակալներից, ինչն այդպես էլ տեղի չունեցավ...

Չորս տարի առաջ մահացած Հակոբ կաթողիկոսի կնիքով 1293 թվականի մայիսին և հունիսին ոմն Հովհաննես ինդուլգենցաներ էր կնքում Փուսերթայից աստիճանաբար վերին Ինթալ շարժվելով: Առանձին վավերագրերը վկայում են մի ուղեգծի մասին, որը, սկսվելով 1293 թվականի մայիսի 25-ին Ինիխենում/Փուսերթայում, ձգվում է մինչև հունիսի 10-ը դեպի Բրիքսթեն/Նոյշթիֆթ, իսկ ամենաուշը հունիսի 19-ին (Բրեյններով) տանում է Ինսբրուք-Վիլտեն: Այնտեղից Հովհաննեսը հունիսի 22-ին գնում է Օբերինթալ. սկզբում Աքսամս, այնուհետև հունիսի 25-ին հասնում է Շքամսի վանք: Այստեղ վավերագրերի շարքը ընդհատվում է, նրա հետագա ուղին (Արլբերգո՞վ, Ֆերնփաստ՞վ) պարզել հնարավոր չէ: Հնարավոր ինդուլգենցիաների կնքումը Հարավ-արևմտյան Գերմանիայում (Աուգսբուրգ, Վյուրթեմբերգ) կամ Շվեյցարիայում, նաև՝ Քերնթենում կամ Հյուսիսային Իտալիայում, այդպիսով, նմանապես անորոշ է մնում: Բրիքսթենի թեմում ինդուլգենցիաների բազմաքանակ լինելը կարելի է վերագրել Բրիքսթենի եպիսկոպոս Հայնրիխ Ե-ի գործողություններին:

Հայտնի փաստաթղթերի ստորագրությունը և թվագրումը հետևյալն են.

1293 V 25, (Stift) Innichen (Pustertal)

Stiftsarchiv Innichen, Orig. Perg. S. (Siegel gut erhalten), Ablass für die Stiftskirche in Innichen: *Johannes dei gratia Niniuensis sedis archiepiscopus, in Chaldeis primas, in regno Armenie parve cancellarius, universis Christi fidelibus ... salutem ... salutari. - Datum apud Iticinam anno domini M^o CC^o LXXXIII^o, indictione quinta, septimo exeunte maio.* – (ungedruckt; Regest b. Emil v. Ottenthal / Oswald Redlich, Archivberichte aus Tirol 3, Wien/Leipzig 1903, S. 507 n. 2549).

Հովհաննեսը՝ Աստծո շնորհով Նինվեի արքեպիսկոպոսը, խաղդեացիների պրիմասը¹⁰, փոքր Հայաստանի թագավորության դիվանապետը, համայն քրիստոնյա հավատացյալներին ... թողություն... փրկվել: Տրված Իտիկինում Տիրոջ

9 Գմմտ. F. Hild – H. Hellenkemper, Kilikien und Isaurien (Tabula Imperii Byzantini 5). Wien 1990, էջ 79-83.

10 Պրիմաս տերմինը, որպես կանոն չի թարգմանվում, բայց կարծում ենք՝ տվյալ դեպքում իմաստային առումով հնարավոր է թարգմանել «խաղդեացիների (հոգևոր) թեմի առաջնորդը»: Թեև պրիմասը, որպես կանոն, արքեպիսկոպոս է, որն առաջնություն ունի տվյալ շրջանի բոլոր արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների նկատմամբ, բայց այդպես են անվանել նաև տեղական ազգային եկեղեցիների, թեմերի ավագ եպիսկոպոսներին, որոնք համարվել են պապի լիազոր ներկայացուցիչներ, այլ ոչ ինքնուրույն պատրիարքներ:

1293 տարում, 5-րդ ինդիկցիայի¹¹ ժամանակ, մայիսի վերջից յոթերորդ օրը:

1293 V 25, (Stift) Innichen (Pustertal)

Pfarrarchiv Niederdorf i. Pustertal, Orig. Perg. S. (Siegel beschädigt), Innichen, Ablass für d. Pfarrkirche in Niederdorf: *Johannes dei gratia archyepiscopus Niniuita (!) in minori Armenio universis ... salutem. – Dat. Iticine anno domini M^o CC^o LXXXIII^o, indictione quinta, septimo exeunte maio.* – (ungedruckt; Regest b. Emil v. Otenthal / Oswald Redlich, Archivberichte aus Tirol 3, Wien/Leipzig 1903, S. 392 n. 1943).

Հովհաննեսը՝ Աստծո շնորհով Փոքր Հայաստանում նինվեացիների¹² արքեպիսկոպոսը՝ համայն [հավատացյալներին]... թողութուն: Տրված Իտիկինում Տիրոջ 1293 տարում, 5 ինդիկցիայի ժամանակ, մայիսի վերջից յոթերորդ օրը:

1293 V 27, (Stift) Sonnenburg (Pustertal)

Innsbruck, Tiroler Landesmuseum Ferdinandeum, Urk. n. U 21 (Provenienz: Spital des Stiftes Sonnenburg i. Pustertal), Orig. Perg. S. (Siegel beschädigt), Ablass für d. (St. Johannes-)Kapelle des Spitals in Sonnenburg: *Johannes dei gratia archyepiscopus Ninnivetan(ensis) dilectis fidelibus ... salutem. – Dat. in Suneburch anno domini M^o CC^o LXXXIII^o, indictione quinta, septimo exeunte maio.* – (ungedruckt).

Հովհաննեսը՝ Աստծո շնորհով նինվեացիների արքեպիսկոպոսը, սիրեցյալ հավատացյալներին...թողութուն: Տրվ. Սունեբուրգում Տիրոջ 1293 տարում, 5-րդ ինդիկցիայի ժամանակ, մայիսի վերջին յոթերորդ օրը:

1293 s. d. (ca. V 27), (Stift) Sonnenburg (Pustertal)

Ehem. Orig. Perg. S. (Siegel verloren) in Enneberg/Marebbe (Gadertal), Kirchenarchiv, (seit 1930 ?) verschollen, Foto in den Sammlungen d. Histor. Komm. am Tiroler Landesmuseum Ferdinandeum, Ablass für d. Kirche in Enneberg/Marebbe: *Johannes dei gratia sancte Ninniu(en)sis) ecclesie archiepiscopus dilectis ... fidelibus ... salutem. – Dat. in Sv^onburgh dominice incarnationis anno M^o CC. nonag(esimo) III^o.* – (Druck: Leo Santifaller, Die Archive Deutschsüdtirols (Eine Übersicht mit einem Urkundenanhang). in: Tiroler Heimat NF 3, 1930, S. 187 n. 1).

Հովհաննեսը՝ Աստծո սրբազան շնորհով նինվեացիների եկեղեցու արքեպիսկոպոսը ... սիրեցյալ...հավատացյալներին...թողութուն: Տրվ. Սունեբուրգում Տիրոջ հայտնության 1293 տարում:

1293 VI 10, (Stift) Neustift (b. Brixen)

Stiftsarchiv Neustift b. Brixen, Lade WW₂: Orig. Perg. S. (Siegel fehlt), Ablass für Stift Neustift b. Brixen: *Johannes permissione divina sancte sedis Niniui(en)sis) ecclesie*

11 Indictio – հայտարարություն պետությանը պարենի պարտադիր մատակարարման մասին: Ինդիկցիայի համարը ցույց է տալիս 15-ամյա ցիկլում տարվա դիրքը: Ժամանակի նման չափումը շրջանառության մեջ է դրվել 312/313 թ., իսկ 537 թ. դարձել է պարտադիր: Սկզբնական շրջանում այն կապված է եղել միայն հարկային պարտավորությունների կատարման ժամկետների հետ: Միջնադարում այն թվագրման առավել կայուն համակարգն է եղել: Տե՛ս նաև <http://ancientrome.ru/obbyt/bickerman/22.htm>:
12 Նինվեացիներ- Niniuitae, arum m. հասկացությունը հոգնակի թվով է, բայց տեքստում եզակի է Niniuita.

archiepiscopus, in regno Armenie parve cancellarius, in Caldea primas, catholice sedis legatus, Correkonen(sis) comes, Sebastiensis dux omnibus facimus.... – Datum Nouecelle anno incarnationis dominice millesimo ducesimo nonagesimo tercio, IIII^o ydus iunii, indictione sexta. – (Druck: Georg Johannes Kugler, Die Urkunden des Augustiner-Chorherrenstiftes Neustift bei Brixen von 1143 bis 1299 (Fontes rerum Austriacarum II/77), Wien 1965, S. 232f n. 179).

ՕՄԻԴՐԻՄՆ

Հովհաննեսը՝ աստվածային սրբազան հաճությամբ նինվեացիների եկեղեցու արքեպիսկոպոսը, փոքր Հայաստանի թագավորության դիվանապետը, Խաղեայի արիմասը, կաթողիկե աթոռի լեզատը, Կորիկոսի կոմսը, Սեբաստիայի դուքսը բոլորին...կատարում ենք... : Տրված Նոյեկեւում տիրոջ հայտնության 1293 տարում, 13 հունիս, 6-րդ ինդիկցիայի ժամանակ, հունիսյան իդոսներից երեք օր առաջ:

1293 VI 19, o. O. (wohl Ampass oder Wilten)

Stiftsarchiv Wilten, Lade 32, B und Pfarrarchiv Ampass, o. Sign.: Pap.-Abschriften saec. XIX/1 nach beschädigtem, jetzt verlorenem Orig. im Pfarrarchiv Ampass, Ablass f. die Pfarrkirche in Ampass: *Joannes divina miseratione Ninivensis ecclesie archiepiscopus universis ... salutem in domino Jesu Christo. ... Datum anno domini MC-CLXXXIII. XIII. kal. julii.* – (ungedruckt; Regest b. *Karl Schadelbauer*, Verzeichnis der Urkunden des Stiftsarchives Wilten von 1138–1299 (Veröffentlichungen aus dem Stadtarchiv Innsbruck 6), Innsbruck 1953, S. 14 n. 80).

1212 հունվար-մարտ, 2012 Գ (Գ) քարի, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

Հովհաննեսը՝ աստվածային ողորմությամբ նինվեացիների եկեղեցու արքեպիսկոպոսը համայն [հավատացյալներին]... փրկություն հանուն տեր Հիսուս Արիստոսի: ...Տրված Տիրոջ 1293 տարում, հուլիսյան կալենդներից առաջ XIII օր:

1293 VI 21, (Stift) Wilten

Stiftsarchiv Wilten, Lade 31, B: Orig. Perg. S. (Siegel gut erhalten), Ablass für St. Bartholomäus-Kapelle in Wilten: *Nos Johannes miseratione divina Ninniuensis ecclesie archiepiscopus Datum et actum in Wiltina anno domini M^o CC^o LXXXX. tertio, XI. kal. julii.* – (ungedruckt; Regest b. *Karl Schadelbauer*, Verzeichnis der Urkunden des Stiftsarchives Wilten von 1138–1299 (Veröffentlichungen aus dem Stadtarchiv Innsbruck 6), Innsbruck 1953, S. 14 n. 81).

համահայկական հանդես

Մենք՝ աստվածային ողորմությամբ նինվեացիների եկեղեցու Հովհաննես արքեպիսկոպոսը... Տրված և կատարված է Վիտինայում Տիրոջ 1293 տարում, հուլիսյան կալենդներից առաջ XI օրը:

1293 VI 21, (Stift) Wilten

Stiftsarchiv Wilten, Lade 46, A: Pap.-Abschrift saec. XIX/1 nach verlorenem Orig. ehem. im Kirchenarchiv Igls, Ablass f. die Kirche in Igls (b. Innsbruck): *Nos Johannes miseratione divina Ninivensis ecclesie archiepiscopus ... cupimus ... – Datum Wiltine anno domini M^o CC^o LXXXX. tertio, XI. kal. julii.* – (ungedruckt; Regest b. Emil v. Ot-

tenthal / Oswald Redlich, Archivberichte aus Tirol 2, Wien/Leipzig 1896, S. 241 n. 1141).

Մենք՝ աստվածային ողորմածությամբ նինվեացիների եկեղեցու Հովհաննես արքեպիսկոպոսը ... տենչում ենք... Տրված Վիտինայում Տիրոջ 1293 տարում, հուլիսյան կալենդներից առաջ XI օրը:

1293 VI 21, (Stift) Wilten

Pfarrarchiv Patsch, hinterlegt im Stiftsarchiv Wilten, Lade 42: Orig. Perg. S. (Siegel fehlt), Ablass für die Pfarrkirche in Patsch: *Nos Johannes miseracione divina Ninniu(en)sis) ecclesie archiepiscopus Datum Wiltine anno domini M^o CC^o LXXX^o tertio, XI. kalen. julii.* – (ungedruckt; Regest b. Emil v. Ottenthal / Oswald Redlich, Archivberichte aus Tirol 2, Wien/Leipzig 1896, S. 275 n. 1350).

Մենք՝ աստվածային ողորմածությամբ նինվեացիների եկեղեցու Հովհաննես արքեպիսկոպոսը ...Տրված Վիտինայում Տիրոջ 1293 տարում, հուլիսյան կալենդներից առաջ XI օրը:

1293 VI 22, Axams (westl. Innsbruck)

Brixen, Bibl. d. Priesterseminars, Codices, Neue Serie Cod. D 5 (Joseph Resch, Urkundenabschriften saec. XVIII/2), sub anno 1293 (Pap.-Abschrift nach verlorenem Orig. (?) wohl im Kirchenarchiv Götzens), Ablass f. die Kirche in Götzens (westl. Innsbruck): *Nos Johannes dei permissione sancte Ninivensis ecclesiae archiepiscopus ... – Datum in Auxsums anno domini M. CC. LXXX. tertio, X. kalendas julii.* – (ungedruckt).

Մենք՝ աստծո սրբազան հաճությամբ նինվեացիների եկեղեցու Հովհաննես արքեպիսկոպոսը...Տրված Աուքսումսում Տիրոջ 1293 տարում, հուլիսյան կալենդներից առաջ X օրը:

1293 VI 25, (Stift) Stams (im Oberinntal)

Pfarrarchiv Silz, Orig. Perg. S. (Siegel gut erhalten), Ablass für d. Pfarrkirche in Silz: *Johannes dei gratia Ninniuensis sedis archiepiscopus omnibus ... salutem in domino sempiternam.* – *Datum Stams anno domini M^o CC^o LXXXIII^o, in crastino sancti Johannis Baptiste.* – (ungedruckt; Regest b. Emil v. Ottenthal / Oswald Redlich, Archivberichte aus Tirol 1, Wien/Leipzig 1888, S. 44 n. 90).

Հովհաննեսը՝ Աստծո հաճությամբ նինվեացիների արքեպիսկոպոսը, բոլորին... հավերժ բողոքյուն հանուն տիրոջ: Տրված Ստամպսում Տիրոջ 1293 տարում Սուրբ Հովհաննես Մկրտչի [ծննդյան] հաջորդ օրը¹³:

Կնքողը շարունակ իրեն անվանում է Հովհաննես (ոչ թե Հակոբոս), Նինվեի արքեպիսկոպոս (տարբեր գրությամբ), ընդ որում մի անգամ (մայիսի 25-ին Նիդերդորֆի համայնքի եկեղեցու համար ինքուլգենցիայում) ավելացվում է „in

¹³ Կաթոլիկների մոտ հունիսի 24-ը մշակում է որպես Հովհաննես Մկրտչի ծննդյան օր:

minori Armenio“: Հայաստանի, ինչպես նաև Կիլիկյան «Փոքր Հայաստանի» սահմանները պատմության ընթացքում փոփոխություններ են կրել, բայց Նինվեի տարածքը (Մոսուլի մոտ՝ Տիգրիսի ափին, ներկայումս՝ Հյուսիսային Իրաքում) երբեք նրան չի պատկանել: Եթե նույնիսկ ենթադրենք, որ այնտեղ գոյություն է ունեցել հայ համայնք, համապատասխան աղբյուրները չեն հավաստում Նինվեի՝ հայ եպիսկոպոսի կամ առավել ևս արքեպիսկոպոսի մասին: Նաև հատկանշական է, որ Կիլիկյան Հայաստանը հայկական աղբյուրներում ընդունված չի եղել անվանել «Փոքր Հայաստան»¹⁴: Ամեն դեպքում մման տիտղոսի պարագայում խնդիրը կարող է վերաբերել Արևելյան եկեղեցու մի եպիսկոպոսի՝ ասորի նեստորականի:

Երկու վկայություններում Հովհաննեսն իրեն անվանում է նաև „in Chaldeis primas“ (մայիսի 25-ին Նիդերդորֆի համար) կամ „in Caldea primas“ (հունիսի 10-ին Նոյշթիվթի վանքի համար), ինչը մատնացույց է անում արևելասիրիական Միջագետքի տարածքը: Արևմտյան եկեղեցում Primas պարզևր հատուկ դեպքերում է տրվում: Իսկ „catholice sedis legatus“ եզրը, որն առկա է միայն Բրիքսի մոտ գտնվող Նոյշթիվթի վանքի արխիվի հունիսի 6-ի վկայականի վրա, և որտեղ Հովհաննեսը առանձնապես շատ է չափազանցրել, այդ ժամանակվա «խելացի թիրուցիները» հասկացել են, անշուշտ, որպես «պապի լիագոր/լեգատ», իսկ Հովհաննեսն ամեն դեպքում կարող էր այն նաև որպես հայ կամ ասորի կաթողիկոսի լեգատ մեկնաբանել:

Իմանալով, որ որոշ երկրներում, ինչպես օրինակ՝ Գերմանական կայսրությունում, արքեպիսկոպոսը միաժամանակ կայսրության կանցլերն էր, Հովհաննեսը յուրացնում է նաև „in regno Armenie parve cancellarius“ (25. 5.) տիտղոսը: Եվ դա էլ բավական չէր. Հովհաննեսը Նոյշթիվթի վանքի արխիվի հունիսի 6-ի առանձնապես շքեղ փաստաթղթում պարծենում էր նաև որպես „Correkon(ensis) comes“ und „Sebastiensis dux“, որի տակ կարելի է հասկանալ ինչպես «Կոռիկոսի կոմս», այնպես էլ «Սեբաստեի/Սեբաստիայի դուքս» երևակայական տիտղոսները:

Կոռիկոսը՝ Փոքր Հայաստանի թագավորության արևմտյան սահմանին գտնվող առևտրային և նավահանգստային կարևոր մի քաղաք (այսօր՝ ավերակների վերածված Կրզկալեսի ավանի մոտակայքում, մոտ 25 կմ Միլիֆ-կեից դեպի հյուսիս-արևելք)¹⁵, այն ժամանակ եղել է Հեթումյանների հայ արքայատոհմի մի ճյուղի սեփականությունը: Սեբաստեն՝ այսօր՝ Այասը, այդ դարերում ավելի պակաս նշանակություն ունեցող նավահանգստային մի քաղաք, գտնվում է նրանից 5 կմ դեպի հյուսիս-արևելք¹⁶:

Ո՞վ էր իրականում այս Հովհաննեսը: Որոշ տիտղոսներ մատնում են նրան որպես խաբեբա, սակայն նա իրեն հաջողությամբ ներկայացնում էր որպես արևելյան եկեղեցու արքեպիսկոպոս, որին բարեպաշտ վանքերը սիրալիք ընդունում էին: Այն հանգամանքը, որ նա խաբում էր և չարաշահում հանգուցյալ Հայոց կաթողիկոսի կնիքը, այդ նահանգում հայտնի չդարձավ. դա մեծ կարևորություն էր տալիս նրա ինդուլգենցիաներին՝ նրան, անշուշտ, մեծ եկամուտ բերելով: Կամ նա լավ տիրապետում էր լատիներենին, կամ էլ կողքին հմուտ գրագիր ուներ:

14 Յմն. Hild – Hellenkemper, a.O. 20.
15 Յմն. Hild – Hellenkemper, 315-320.
16 A.O. 400f.

Հակոբի կնիքը հավանաբար Հռոմկլայի գրավման ժամանակ գողացել էին և ինչ-որ կերպ վաճառքի հանել, որտեղից էլ Հովհաննեսն այն ձեռք էր բերել: Հնարավոր է, որ Հովհաննեսը ասորի էր՝ Փոքր Հայաստանից: Մինչ այժմ մեզ հայտնի չեն նման այլ վկայականներ կամ կնիքներ դեպի Հարավային Գերմանիա կամ Շվեյցարիա Հովհաննեսի հետագա ճանապարհին: Մի՞թե այստեղ նրա սուտը բացահայտվել է...

Գոյություն չունի ոչ մի ապացույց այն մասին, որ Հովհաննեսը Փոքր Հայաստանի պաշտոնական դեսպանն էր կամ որևէ պատվիրակության անդամ, թեև, անշուշտ, այն ժամանակ այդպիսիներ եղել են: Հավանաբար խոսքը մի փախստականի մասին է, որը, իր հայրենիքի աղետալի վիճակից հուսահատված, համեմատաբար կայուն Արևմուտքում էր բախտ որոնում, ընդ որում՝ միջոցների ընտրության հարցում խտրականություն չէր դնում:

Գերմաներենից թարգմանությունը՝ քսնաս.գիր. թեկնածու Լիանա Ա. Սաֆարյանի:

Լատիներեն ինդուլգենցիաների թարգմանությունն ու տողատրակերի բացատրությունները՝ պատմ. գիր. թեկնածու Լիլիթ Ռ. Մինասյանի:

**HAKOB A. KLAYETSI CATHOLICOS OF ALL
ARMENIANS (1268-1286) WAX SEAL ON THE 1293 TYROLEAN
INDULGENCE**

Werner Seibt
Martin Bitschnau (Vienna, Austria)